ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը սուրբ հաղորդության խորհրդի մասին՝ «Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴ ՕՐԵՐԻՆ Հոգևոր Ճեմարանի դասավանդության ներկա եղավ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, հանգամանորեն հետաքրքրվեց Ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներով, զրույց ունեցավ բոլոր դասախոսների հետ յուրաքանչյուրի ավանդած առարկաների առնչությամբ, արեց կարևոր թելադրություններ՝ Ճեմարանում ուսումնա-դաստիարակչական աշխատանքները էլ ավելի բարձրացնելու և ուսանողությանը կայուն գիտելիքներով զինելու համար։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղան։ Քարոզեց Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը «Ընդէ՞ր երկմտիս, թերահաւատ» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՏԵԱՌՆ-ԸՆԴԱՌԱՋ։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հարություն աբեղա Մատենջյանը։ Պատարագի ընթացքում օրվա տոնի մեծ խորհրդի և նշանակության մասին քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը «Արդ, արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 16-ԻՆ, ՇԱԲԱԹ, Ս. Սարգիս զորավարի տոնի առթիվ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ և անմահ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Քարոզեց Մեծի Տանն Կիլիկիո միաբան Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում բանախոսեց գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը Հայ Եկեղեցու ներկա և ապագա գործունեության մասին։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 22-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վեհափառ Հայրապետի հրամանով Մայր Աթոռ ժամանեց Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը։

Հայր սուրբը Մայր Աթոռում կմնա երկուսմիս ժամանակով։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը, իսկ քարոզեց հոգեշնորհ Տ. Հարություն աբեղա Մատենջյանը՝ Ս. Սարգսի կյանքի և գործունեության շուրջ։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 27-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

***

ՄԱՐՏԻ 1-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետի հրավերով, ասմունքի տաղանդավոր վարպետ Սուրեն Քոչարյանը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի հավաքույթների դահլիճում կարդաց Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից իր իսկ կազմած գրական շարադրանքը, երեք մասից բաղկացած, Ասմունքի երեկույթին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ամբողջ ուսանողությունը, դասախոսական կազմը և Մայր Աթոռի ողջ պաշտոնեությունը։

Մեծանուն և տաղանդավոր արվեստագետը ասմունքի իր բարձր արվեստով խոր և անջնջելի տպավորություն թողեց ունկնդիրների վրա։

***

ՄԱՐՏԻ 2-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամերգության ընթացքում վարագուրվեցին Մայր Տաճարի սուրբ սեղանները։ Իշման Սեղանի վարագույրները քաշեցին Վեհափառ Հայրապետը, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոսը և գերաշնորհ Տ. Եղնիկ եպիսկոպոսը։

Մեծ պահքն է արդեն, իր սրտառուչ խոհերով, շարականներով, խորհուրդներով։ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, ամբողջ Մեծ պահոց ընթացքում, Մայր Աթոռում կկատարվեն Մեծ պահոց հատուկ հանդիսավոր ժամերգություններ։ Չորեքշաբթի օրերին՝ հանդիսավոր Արևագալ, իսկ ուրբաթ օրերին՝ հսկում։

Մեծ պահոց օրերին կքարոզեն Մայր Աթոռի միաբանները։

***

ՄԱՐՏԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ՝ Բուն բարեկենդան։ Ավագ Սեղանի վրա մատուցվեց փակ սուրբ պատարագ։ Պատարագեց հոգեշնորհ Տ. Խոլեն վարդապետ Էլչուջյանը։ Քարոզեց արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան, միաբանական սեղանատան մեջ, բարեկենդանի սեղանի շուրջ հավաքվել էին Մայր Աթոռի միաբաններն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողները։ Սեղանին նախագահեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։ Ավագագույն միաբանները բարեկենդանի առթիվ թելադրիչ և հետաքրքրական հուշեր պատմեցին Մայր Աթոռի, նախկին Գևորգյան Ճեմարանի կյանքից, և խրատեցին ուսանողությանը՝ պահոց օրերին ապրել աղոթքով, խոկմունքներով, ընթերցանությամբ։

***

ՄԱՐՏԻ 6-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճարում հանդիսությամբ սկսվեցին Արևագալի ժամերգությունները։ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ կատարեց Արևագալի ժամերգության երգերն ու հորդորակները, Հոգևոր Ճեմարանի եկեղեցական երաժշտության դասատու արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանի ղեկավարությամբ։

Ժամերգության ներկա էին Վեհափառ Հայրապետը, ամբողջ միաբանությունը, ուսանողությունը, դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։

***

ՄԱՐՏԻ 6-ԻՆ, ԵՐԵԿՈՅԱՆ ժամը 7-ին, Վեհարանում միաբանության համար կազմակերպված հավաքույթում բանախոսեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը, Անթիլիասի կաթողիկոսական ընտրության տաղնապին շուրջ։

***

ՄԱՐՏԻ 8-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, երեկոյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում կատարվեց առաջին հանդիսավոր հսկումը, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի։ Քարոզեց Վեհափառ Հայրապետը «Ուղիղ եղիցին աղօթք մեր, որպէս խունկ առաջի Քո, Տէր» բնաբանով։

Հսկման արարողությունը ձայնագրվեց և մարտի 11-ին, երկուշաբթի, Երևանի ժամանակով գիշերվա ժամը 11.30-ին ձայնասփռվեց Երևանի ռադիոկայանից։

***

ՄԱՐՏԻ 9-ԻՑ ՍԿՍԱԾԱԼ, Վեհարանում, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, սկսվեցին մի շարք խորհրդակցություններ՝ նվիրված Մայր Աթոռում 1957 թվականի ընթացքում տեղի ունենալիք շինարարական աշխատանքներին։

Խորհրդակցություններին մասնակցում էին ճարտարապետ Մ. Մազմանյանը, Ռ. Իսրայելյանը, Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսա-

կան կառավարչության պետ Հ. Սեդգարյանը, ինժեներներ Մանվելյանը, Հ. Ավագյանը և ուրիշներ։

Խորհրդակցություններին ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը և Հայկական ՍՍՌ շինարարության մինիստր Մ. Սարուխանյանը։

***

ՄԱՐՏԻ 10՝ ԱՐՏԱՔՄՄԱՆ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը։ Քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը. «Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում» բնաբանով։

***

ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԿԻՐԱԿԻ, տեղի ունեցան Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունները։

Առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ի գլուխ Մայր Աթոռի միաբանության, մասնակցեց ընտրության։ Վեհափառ Հայրապետը առաջին անգամն էր Մայր Հայրենիքում քվեարկության մասնակցում։ Իր քվեն քվեատուփը գցելով, Վեհափառ Հայրապետը ջերմագին խոսքերով հայտնեց Իր խորունկ հուզմունքն ու ուրախությունը։ Ապա օրհնեց հայ ժողովրդին, մեր պետական իշխանության օրգաններին՝ լավագույն հաջողությունների բարեմաղթություններով։

***

ՄԱՐՏԻ 11-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ երեկոյան, Վեհարանում, միաբանության համար երկրորդ բանախոսությունը կարդաց հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կյանքի և գործունեության շուրջ։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին այցելեց առաջին կիսամիջին քաշի բոնցքամարտիկ, Եվրոպայի 1953 թվականի և ՍՍՌՄ 1956 թվականի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ Վլադիմիր Ենգիբարյանը, Մելբուռնի համաշխարհային 16-րդ օլիմպիադայից իր հաղթական վերադարձի առթիվ։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վեհափառ Հայրապետին այցելեցին Կոմիտասի անվան կվարտետի անդամները, ապա հայտնի կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը և Երևանի Հայֆիլհարմոնիայի դիրեկտոր Գուրգեն Հայրապետյանը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայից «Ցոմգե վելդ» թերթի թղթակիցներ պ. Շմոտցը և պ. Ցվանցիկը։ Նրանք եղան նաև Մայր Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում, ծանոթացան Տաճարի ճարտարապետական առանձնահատկություններին։ Հյուրերը լավագույն տպավորություններով մեկնեցին Երևան։